ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ալափարսի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

20 հուլիսի 2012թ. **գյուղ Ալափարս**

2012 թվականի հուլիսի 20-ին տեղի է ունեցել Ալափարս համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1.Ադամյան Արթուր

2.Գրիգորյան Գայանե

3.Թորգոմյան Արթուր

4.Մկրտչյան Դերենիկ

5.Նազարյան Գուրգեն

Գյուղապետարանի աշխատակազմից՝

1. Մարգարյան Աշոտ՝ համայնքի ղեկավարի տեղակալ.
2. Հակոբյան Գեղամ՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար.
3. Սոլկարյան Մարիետա՝ գյուղապետարանի աշխատակազմի գլխ. մասնագետ-հաշվապահ.
4. Հովհաննիսյան Էլիդա՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-գանձապահ.
5. Արմենակյան Սիլվա՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ.
6. Սարիբեկյան Արտակ՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ.
7. Գրիգորյան Գայանե՝ գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ:

Համայնքի բնակիչներ՝ թվով 107 մարդ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

Համայնքի ղեկավար Վարդան Վարդանյանը իր զեկույցում ներկայացրեց 2011 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2012 թվականի հուլիս ամիսը կատարված աշխատանքները՝

1.Բալաստապատվել են համայնքի անանցանելի փողոցները.

2.Համայնքի նոր թաղամասում կառուցվել է խմելու ջրի ջրագիծ, որով համայնքի այդ հատվածի բնակչությանը մատակարարվում է «Ալափարս» աղբյուրի ջուրը.

3.Ավարտին է հասցվում համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Դերենիկ Մկրտչյան՝ համայնքի ավագանու անդամ – առաջարկվում է համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և հետևել ընթացքի մեջ գտնվող համայնքի մանկապարտեզի հիմնագորոգման աշխատանքներին:

Գեղամ Հակոբյան՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – առաջարկվում է համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և աշխատանքներ տանել համայնքում ոռոգման ներքին ցանց կառուցելու ուղղությամբ:

Սոլկարյան Մարիետա՝ գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ – առաջարկվում է համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և փնտրել ֆինանսավորման աղբյուներ՝ ոռոգման նոր ջրագիծ կառուցելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1.Կառուցել ոռոգման նոր ջրագիծ.

2.Կառուցել ոռոգման փակ ցանց.

3.Հիմնանորոգել համայնքի փողոցները.

4.Հիմնանորոգել համայնքի մշակույթի տունը:

ՈՐՈՇՎԵՑ

1.Համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն:

2.Առաջիկայում կատարել հետևյալ աշխատանքները՝

2.1.Հետևել համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներին.

2.2.Փնտրել ֆինանսավորման աղբյուրներ՝ նոր ոռոգման ջրագծի, ոռոգման փակ ցանցի կառուցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ**